ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-6

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար անալիզատորների և ռենտգեն սարքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 22.04.2026թ. N 237/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.05.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Շահինյանը, Ն.Թադևոսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մանվելյանը: Հանձնաժողովի նիստը նախագահի բացակայության պատճառով նախագահում էր ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված Գ.Շահինյանը:

Օրակարգ

Հայտերի ուսումնասիրության մասին

1. 2-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած «ՄԵՅԴ ԹՈՒ ՄԵՅՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

2. 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած «Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը: Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն համակարգի միջոցով մասնակիցը իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացրել է Պատվիրատուի կողմից հրավերով սահմանած տեխնիկական բնութագիրը հրավերից նույն ձևով արտատպելով: Հաշվի առնելով, որ մասնակիցը հայտով առաջարկել է «Trunarc Tau» մակնիշի ապրանք, ուստի անհրաժեշտ է, որ մասնակիցը ներկայացնի իր կողմից առաջարկվող «Trunarc Tau» մակնիշի ապրանքի հստակ տեխնիկական բնութագիրը իր ցուցանիշներով՝ հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և /կամ/ երբ ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված ապրանքը մասնակցի կողմից առաջարկվում է որպես գործակալ / կատարող /, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Լաբտեխ գրուպ» ՍՊԸ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-Նիստը վերսկսել՝ 2026 թվականի մայիսի 25-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը նախագահող՝ Գ.Շահինյան

Անդամներ՝ Ն.Թադևոսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան